ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷԼԻՏԱՅԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Հայկ Սուքիասյան
Քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Պետության արտաքին քաղաքականության ընկալման, ճշգրիտ իմաստավորման և իրականացման համար անհրաժեշտ է այն տեղափոխել գիտատեսական իմաստավորման հարթություն, հակառակ պարագայում այն վերածվելու է գավառամտության:

Այս իմաստով՝ կարևոր է քննարկել միջազգային հարաբերությունների տեսությունները և դրանց շրջանակներում իմաստավորել ՀՀ արտաքին քաղաքականությունը:

Ռեալիստներ: Ռեալիստները պնդում են, որ էլիտայի և զանգվածի հարցը պետք է քննարկել ազգայինի համատեքստում: Ըստ ռեալիստների՝ ազգային պետությունները ղեկավարվում են ազգային էլիտաների կողմից ռացիոնալ ընտրանքի սկզբունքով: Եվ հենց այս էլիտաներն էլ համարվում են միջազգային հարաբերությունների ունիկալ ակտորներ, միջազգային քաղաքականության մեջ հաշվի են առնում սեփական ազգային շահերը, հասկանում են դրանք և իրականացնում են միջազգային քաղաքականության մեջ: Ազգային էլիտան, ըստ ռեալիստների, ազգային պետության հոմանիշն է, և այդ ազգային էլիտայի մեջ կենտրոնանում է սուբյեկտի երկու կարևոր հատկանիշ՝ խելք և կամք: Այդ էլիտան հասկանում է ինքն ինչ է անում, հասկանում է աշխարհը, հաշվի է առնում սեփական պետության շահերը և դրանք իրականացնում է կամային ձևով, այսինքն՝ կամքի գործադրմամբ: Եվ, ըստ ռեալիստների, զանգվածները ընկալվում են տվյալ հասարակության բաղադրատարր, այսինքն՝ ռեալսիտների մոտ զանգվածները բացառվում են միջազգային քաղաքականության մեջ, և ընկալվում են որպես պետության մեջ պետության ռեսուրսներից

մեկը: Օրինակ՝ ինչքա՞ն է ձեր տարածքը, ինչքա՞ն բարել նավթ ունեք, այսինքն՝ զանգվածը դիտարկվում է այս ռեսուրսների շարքում: Այսինքն՝ զանգվածները դուրս են դրվում քաղաքականությունից և ազգային էլիտաները դիտարկվում են որպես պետության հոմանիշ: Ընդ որում՝ ռեալիստների համար կարևոր չէ՝ ինչպիսի՞ է ազգային էլիտան, տոտալիտա՞ր է, ավտորիտար, թե դեմոկրատական: Ցանկացած հասարակությունում կա և՛ էլիտա, և՛ կոնտրէլիտա: Եվ եթե մենք գործ ունենք ռեալիստների հետ, ապա պետք է իմանանք, որ ռեալիստները հարաբերություններ են հաստատում և՛ էլիտաների հետ, այսինքն՝ խոսքը պաշտոնական դիվանագիտական հարաբերությունների մասին է, և՛ կոնտրէլիտայի հետ՝ կախված ազգային շահերից: Մի դեպքում՝ էլիտայի հետ, եթե այդպես է պահանջում ազգային շահը, մեկ այլ դեպքում՝ կոնտրէլիտայի, եթե պետությունը ռացիոնալ հիմնավորում է տեսնում համագործակցել վերջինիս հետ, եթե նորից այդպես է պահանջում ազգային շահը: Այսինքն՝ ինչ-որ պետության կոնտրէլիտան կարող է համագործակցել այլ պետության էլիտայի հետ, եթե այդ պետության էլիտան շահագրգռված է իշխող էլիտայի թուլացմամբ կամ ապագա էլիտայի հետ հարաբերությունների պռոգնոզավորման մեջ: Այսպիսին է տեսնում էլիտայի և զանգվածի պրոբլեմը ռեալիստական հարացույցը:

Հիմա խոսենք միջազգային հարաբերություններում **լիբերալիզմի հարացույցի** մասին: Այստեղ ամեն ինչ սկզբունքորեն այլ է: Այստեղ խոսքը ոչ միայն պարզապես միջազգային հարաբերությունների մասին է, ոչ միայն պարզապես էլիտայի մասին է, այսեղ շեշտը դրվում է ռեժիմի՝ վարչակարգի վրա: Այսինքն՝ կարևոր է ոչ թե էլիտան, այլ այն, թե արդյո՞ք այդ էլիտան ռոտացիայի է ենթարկվում դեմոկրատական սկզբունքով: Լիբերալները պնդում են, որ էլիտայի ռոտացիայի եղանակը կարևոր է: Ըստ լիբերալների՝ էլիտայի ռոտացիայի դեմոկրատական սկզբունքը ստեղծում է դեմոկրատական հասարակություն, և հանգում են եզրակացության, որ այս դեմոկրատական հասարակությունը և մյուս դեմոկրատական հասարակությունը, այսինքն՝ այն հասարակությունը, որտեղ էլիտան ձևավորվում է դեմոկրատական, այսինքն՝ համանման

մեթոդաբանությամբ, ընտրանքի միջոցով, մոտ են միմյանց և ավելի հակված են միմյանց հետ խաղաղ հարաբերություններ հաստատելուն, քան դեմոկրատական և ոչ դեմոկրատական հասարակությունները: Ռեալիստենրի համար միևնույն է, իսկ լիբերալների համար միևնույն չէ: Այսինքն՝ միանգամից առաջանում է միջազգային հարաբերությունների բացարձակապես նոր մոդելավորում: Լիբերալները ասում են. մեր հասարակությունը դեմոկրատական է, մյուս հասարակությունը դեմոկրատական է, համապատասխանաբար էլիտաները ռոտացիայի են ենթարկվում նույն սկզբունքով, հետևաբեր մեր մեջ ավելի շատ ընդհանուր բան կա, քան այն հասարակությունների հետ, որտեղ դեմոկրատական ռեժիմներ չկան: Պետություններում, որտեղ չկա ժողովրդավարություն, կոնտրէլիտան օտարված է իշխանությունից և գտնվում է իշխանության կողմից խիստ ճնշման տակ և իշխանության նկատմամբ խիստ ընդդիմադիր հայացքներով, որովհետև ժողովրդավարական հասարակություններում կոնտրէլիտան ընդգրկված է իշխանության մեջ, և այդ կոնտրէլիտայից դեմոկրատները ընտրում են իրենց կադրերին, իսկ ոչ դեմոկրատական հասարակություններում կոնտրէլիտան գտնվում է մեկուսացման մեջ: Նրան ոչինչ չեն տալիս: Այդ պատճառով դեմոկրատական էլիտաները համագործակցում են ոչ դեմոկրատական հասարակությունների կոնտրէլիտաների հետ, որպեսզի նպաստեն հասարակության ժողովրդավարացմանը: Ինչի՞ համար է անհարժեշտ ստեղծել ժողովրդավարական վարչակարգեր. որպեսզի բարձրացվի ինտեգրման, համագործակցության աստիճանը և նվազեցվի պատերազմի հավանականությունը: Քանի որ դեմոկրատները պնդում են, որ դեմոկրատական էլիտաները միմյանց դեմ չեն պատերազմում (կասկածելի թեզիս է): Հետևապես, ըստ լիբերալների, արտաքին քաղաքականության հիմնական նպատակը էլիտայի ռոտացիայի ժողովրդավարացմանը նպաստելն է տեսականորեն բոլոր հասարակություններում: Սա բացատրում է այսօր աշխարհում տեղի ունեցող տարբեր իրադարձություններ. օրինակ՝ ԱՄՆ-ի, որպես դեմոկրատական պետության աջակցությունը ռադիկալ

վահաբիտներին Լիբիայում, ռադիկալ մուսուլմաններին՝ Եգիպտոսում, ռադիկալ իսլամիստներին՝ Սիրիայում: Ինչու՞: Քանի որ մտածողությունը հետևյալն է: Ովքե՞ր են ռադիկալ իսլամիստները Սիրիայում. կոնտրէլիտայի ներկայացուցիչներ: Դրանք մարդիկ են, ովքեր ցանկանում են կառավարել, բայց աշխարհիկ, խսիտ փակ ազգային էլիտաները այդ հնարավորությունը իրենց չեն տալիս: Ուրեմն պետք է դրանց օգնել այդ հասարակությունները ժողովրդավարացնելու համար, որպեսզի էլիտայի ռոտացիան ընթանա ավելի դեմոկրատական ձևով: Եվ այստեղ, ուշադրություն դարձրեք, ռիսկը, պաշտպանել բացարձակապես ոչ դեմոկրատական ուժերին, օրինակ՝ ծայրահեղ իսլամիստներին, լիբերալների համար ավելի քիչ է, քան էլիտայի ոչ դեմոկրատական ռոտացիայի ֆիքսումը, կարծրացումը: Այսինքն՝ առաջանում է միջազգային հարաբերությունների հետևյալ մոդելավորումը, բալանսը. երբ որոշակի հանդուրժողականությունը, ուլտրաէքստրեմիստական կոնտրէլիտային պաշտպանելը թվում է ավելի ճիշտ, որոնք դրանից կարող են օգտվել, քան էլիտայի ոչ դեմոկրատական ռոտացիայի ֆիքսումը: Այսինքն՝ առաջանում է հետևյալ բանաձևը. այն դեպքում, եթե ռեալիստենրը համագործակցում են և՛ էլիտայի, և՛ կոնտրէլիտայի հետ, ապա լիբերալները հակված են համագործակցելու ոչ դեմոկրատական պետության բացառապես կոնտրէլիտայի հետ: Այսինքն՝ միայն էլիտայի դեմոկրատական ռոտացիայի սկզբունքը լիբերալների համար ունի ինքնուրույն, կոնցեպտուալ նշանակություն: Ասինքն՝ ռեալիստենրը գործում են ազգային շահերից ելնելով՝ ինչ-որ տեղ նրանք պաշտպանում են էլիտային, մյուս դեպքում կոնտրէլիտային կախված ազգային շահերից, այն դեպքում, երբ լիբերալները մշտապես հակված են պաշտպանելու այն ռեժիմները, որտեղ տեղի է ունենում էլիտայի դեմոկրատական ռոտացիա: Սա օրինաչափություն է:

Այս շրջանակներում է, որ պետք է քննել հայոց ցեղասպանության ճանաչումը ԱՄՆ նախագահ Բայդենի կողմից: Վստահ եմ, որ այս ճանաչումը պետք է քննել հենց միջազգային հարաբերությունների՝ լիբերալիզմի տեսության ծիրում: Վստահ եմ, որ այս ճանաչումը ոչ

միայն արժեորումն է մարդու իրավունքների, այլ գնահատանքն է եղել հայկական ժողովրդավարության և հայ ժողովրդի ժողովրդավարական ձգտումների: Վստահաբար, ավտորիտար Հայաստանի պարագայում այս ճանաչումը չէր լինելու: Հետևապես, ակնհայտ է, որ լիբերալիզմի տեսությունը ակնհայտորեն աշխատել է այս հարցում:

Հիմա, **նեոլիբերալները,** այսինքն՝ լիբերալիզմի տրանսազգային ենթահարացույցի, տրանսազգային թրենդի ներկայացուցիչները, փոխում են իրենց պատկարացումը զանգվածների վերաբերյալ: Այսինքն՝ լիբերալիզմի մեջ կա երկու ուղղություն. մեկը կարծում է, որ ամբողջ գործընթացը սկսում և ավարտվում է էլիտայի դեմոկրատական ռոտացիայի գործընթացով, դրանք, այսպես ասած, «խելքը գլխին» լիբեռալներն են, և կան ռադիկալ լիբերալներ, որոնք լրջորեն համոզված են, որ Պարետոն սխալվում է, և որ զանգվածները կարող են ձեռք բերել որոշակի լրացուցիչ որակներ, որոնք կարող են զանգվածներին վերածել էլիտաների: Այս ուղղության նարկայացուցիչներից է Ջեյմս Ռոզենանուն, ով իր՝ միջազգային հարաբերությունների ալեկոծում գրքում[1] առաջ է քաշում, այսպես կոչված, skilful individual – հմուտ, պահանջատեր անհատի գաղափարը: Այսինքն՝ զանգվածի ներկայացուցիչը դադարում է լինել ամորֆ և սկսում է ներգարվվել պետության կառավարման գործընթացում: Տեղի է ունենում շատ հետաքրքիր գործընթաց. ռադիկալ լիբերալները վերաիմաստավորում են էլիտայի և զանգվածների բալանսի հարցը: Նրանց կարծիքով՝ դեմոկրատիայի ընդլայնման գործընթացը հանգեցնելու է հասարակության որակական փոփոխության՝ նրա երկու բևեռների՝ էլիտայի և զանգվածի աստիճանական մերձեցման ճանապարհով: Այսինքն՝ ըստ ուլտրալիբերալների, զանգվածը անփոփոխ, հաստատուն բան չէ, ի տարբերություն Պարետոյի, այլ դա փոփոխական վիճակ է, որը կարող է փոխվել այնպես, ինչպես փոխվում է էլիտան: Զանգվածի և էլիտայի միջև կարող է առաջանալ ինչ-որ հիբրիդ, կիսազանգված-կիսաէլիտա, դա էլ հենց skilful individual – ն է: Այսինքն՝ նա բավականաչափ էլիտար չէ որ կառավարի, բայց բավականաչափ զարգացած է, որ

[1] **James N. Rosenau.** Turbulence in World Politics: A Theory of Change and Continuity. Princeton University Press, 1990. pp. 480.

այլևս զանգված չհամարվի: Օրինակ՝ սոցիալական փիլիսոփայության մասնագետ ամերիկացի Քրիստոֆեր Լաշը իր գրքում, որը վերնագրված է էլիտայի ապստամբությունը[1], նշում է, որ ժամանակակից էլիտաների մոտ բացակայում են էլիտար հատկանիշները: Այսինքն՝ ցածր խավի ներկայացուցիչներ են՝ միջին ճաշակի, միջին կրթության, միջին երաժշտական ճաշակի, մշակույթի մասին միջին պատկերացումով, ընդհանրապես միջին որակների կրողներ են, որոնք այս կամ այն ճանապարհով հասել են բարձր պաշտոնների կամ կարգավիճակի հասարակության մեջ. իրավիճակ կամ երևույթ, որն նա անվանում է էլիտայի ապստամբություն: Այսինքն՝ հասարակ զանգվածը գալիս է իշխանության, բայց չի փոխում իր որակը, ճաշակը, չի դառնում մասշտաբային: Այլ մնում է այնպիսին, ինչպիսին մինչ այդ էր: Այսինքն՝ էլիտա, որը էլիտա է ըստ ֆունցկիայի, բայց էլիտա չէ, ըստ որակների, որը չունի ո՛չ կամք, ո՛չ խելք, ինչը տարբերում է բնականաբար էլիտաներին: Այսինքն՝ առաջանում է այսպես ասած մոխրագույն էլիտա, չէ՞ որ էլիտան ամեն դեպքում հասարակության փայլն է, կապ չունի՝ ինչպիսին է դա, դեմոկրատակա՞ն, թե ոչ դեմոկրատական: Եվ հիմա առաջանում է էլիտայի նոր տեսակ՝ մոխրագույն, անփայլ, առանց կամքի, առանց խելքի, թույլ էլիտա: Հենց սրան է տանում, ըստ Լաշի, ռադիկալ լիբերալիզմը:

Այսինքն՝ առաջանում է էլիտայի և զանգվածի ինչ-որ կոմպրոմիսային տիպ: Ո՞վ է դա: Դա քաղաքացին է, որը այնքան ակտիվ, վառ կամ սարսափազդու չէ, ինչպիսին տիրակալն է: Տիրակալի, էլիտայի համեմատ նա վախկոտ է, թույլ է, խելացի չէ. տիրակալը պետք է մտածի, այլապես այլ տիրակալ նրան կտապալի. էլիտար լինելը պահանջում է մեծ էներգիա, պասիոնարություն: Այսինքն՝ քաղաքացին ղեկավարի, տիրակալի թույլ տեսակն է, որը ղեկավարի համեմատ զանգված է, բայց զանգվածի համեմատ էլիտա է, քանի որ ի տարբերություն զանգվածի՝ քաղաքացին ինչ-որ բանի վրա միշտ պնդում է, պահանջներ ունի, զանգվածը ոչինիչ չի պահանջում. տվեք աշխատանք, տուն, ծառ, շուն և դա բավարար է: Այսինքն՝ քաղաքացին զանգվածի համեմատ շատ խելացի է, ամբիոցիոզ, իսկ էլիտար լինելու համար բավական թույլ և անխելք: Եվ

[1] **Lasch Ch.**, The Revolt of the Elites and the Betrayal of Democracy. 1996, 276 p.

ահա, միջազգային հարաբերություններում ռադիկալ լիբերալները շեշտը դնում են հենց քաղաքացու վրա: Այսինքն՝ էլիտայի և զանգվածի այս դիտարկումը ծնում է բացարձակապես նոր մոդել՝ քաղաքացիական հասարակություն կամ մարդու իրավունք: Եվ հենց այսպիսի մարդու իրավունքն է պաշտպանում մարդու իրավունքը: Տիրակալին, էլիտային պաշտպանելու կարիք չկա, նա իրեն կպաշտպանի, նա ինքը իր իրավունքները կվերցնի. փորձեք մի տվեք այդ իրավունքը: Իսկ զանգվածից կարելի է ցանկացած իրավունք խլել, միևնույն է նա այդ իրավունքներից օգտվել չգիտի և ոչնչի վրա չի էլ պնդում. պնդում է, համառում է միայն քաղաքացին: Եվ այսպես, միջազգային հարաբերություններում ուլտրալիբերալները շեշտը դնում են հենց այսպիսի skilful individual-ի վրա, որը փոխարինում է և՛ էլիտային, և՛ զանգվածին: Եվ արդյունքում հասարակությունը դիտվում է գլոբալ՝ կազմված քաղաքացիներից: Սա գլոբալ քաղաքացիական հասարակությունն է, որտեղ կան միայն այդպիսի skilful individual-ներ, որոնք փախարինում են և՛ համաշխարհային էլիտաներին, և՛ համաշխարհային զանգվածներին: Եվ սա հենց համաշխարհային միջին դասն է: Միջին դաս, որը ոչ վերևում է, ոչ ներքևում, այլ մեջտեղում է: Այսինքն՝ նրանց նպատակը զանգվածներին իրենց մակարդակին բարձրացնելն է, իսկ էլիտաներին իրենց մակարդակի իջեցնելը: Եվ նեոլիբերալները ենթադրում են, որ դրանք կարող են ինքնակառավարվել. ամեն մեկը ինքն իրենով կառավարվում է: Այսինքն՝ չկա կառավարում. ոչ ոք չի կառավարում, բոլորը կառավարվում են: Այսինքն՝ կառավարող չկա, բոլորն էլ կառավարում են: Մենեջմենթը դառնում է որոշակի արքետիպ. բոլորը կարծես կառավարվել գիտեն: Եվ, ըստ նեո կամ ուլտրալիբերալների՝ դեմոկրատիայի տարածումը և զարգացումը կբերի նրան, որ բոլոր երկրներում կձևավորվեն այդ skilful individual-ները, պետությունները կվերանան, և այդ գլոբալ քաղաքացիական հասարակությունը կինքնակառավարվի:

Հիմա անցնենք **պոստպոզիտիվիստական** մոդելին:

Ինչպե՞ս է լուծվում էլիտայի պետությունների և զանգվածի պետությունների հարցը այս ուղղությունների մեջ: Պոստպոզիտիվիզմում առաջին պլան է գալիս խոսույթը (դիսկուրսը): Էլիտայի և զանգվածի հարցը այստեղ դիտարկվում է լեզվի միջոցով: Այսինքն՝ էլիտան և զանգվածը կոնկրետ հասարակությունում

սոցիալական դերերի անհավասար բաշխումն է, որը քննարկվում է լեզվի կառուցակարգերի միջոցով: Այս համատեքստում՝ էլիտան և զանգվածը հանդես են գալիս որոշակի տեքստային ֆիգուրների ձևով, ինչպես նախադասության մեջ ենթական և ստորոգյալը: Ենթական, սուբյեկտը էլիտան է, իսկ ստորոգյալը, այսինքն՝ ստորադասվողը՝ զանգվածը: Այստեղ կա հետաքրքիր պահ: Ըստ պոստպոզիտիվիզմի՝ էլիտան և զանգվածը գոյություն չունեն ապրիորի. պետք է նախ և առաջ դրանց ստեղծել, և ստեղծվում են, ձևավորվում են, կազմավորվում են դրանք խոսույթի միջոցով: Այսինքն՝ իրականում էլիտան և զանգվածը ստեղծվում են լեզվական պրակտիկայի միջոցով: Ի՞նչն է առաջնայինը պոստպոզիտիվիզմի տեսանկյունից, էլիտա՞ն, թե՞ զանգվածը: Ոչ մեկը, ոչ մյուսը: Այստեղ առաջնայինը անհավասարությունն է, և այդ անհավասարությունը անպայմանորեն կստեղծի տիրոջ և ենթակայի գաղափարը: Պոստպոզիտիվիստները պնդում են, որ հենց այդ անհավասարությունը, որը դրսևորվում է լեզվի մեջ, ծնում է էլիտա և զանգված: Ի՞նչն է առաջացնում այսպիսի աստիճանակարգում, այսպիսի սահմաններ էլիտայի և զանգվածների միջև. դա, նրանց կարծիքով, տեքստն է, լեզուն է, խոսույթի կազմակերպումը: Հենց լեզուն իքնին անհավասարություն է առաջ բերում ենթակայի և ստորոգյալի տեսքով: Եվ երբ մենք խոսում ենք, մեր խոսքի մեջ դրսևորվում է այդ անհավասարությունը, տարբերությունը, որն էլ մեզ դնում է կոնկրետ իրավիճակում էլիտայի կամ զանգվածի շարքերը: Այնուհետև, համապատասխանաբար, էլիտան սկսում է խոսել իր լեզվով, իսկ զանգվածը իր լեզվով: Եվ երբ մենք խոսում ենք, դրանով պարզ է դառնում՝ մենք պատկանում ենք էլիտային, թե՞ զանգվածին: Սա դրսևորվում է և՛ կոնկրետ պետության մեջ, և՛ միջազգային հարաբերություններում: Այս պատճառով՝ հեղափոխական պոստմոդեռնիստները առաջարկում են արմատապես փոխել միջազգային հարաբերությունների լեզվական կառուցվածքը, որպեսզի հրաժարվեն ակումբի հասկացությունից, օրինակ՝ մեծ ութնյակ. սա ի՞նչ է. ակումբ է, մեծ քսանյակ. ակումբ է էլիտաների համար, և մարդկության մյուս ներկայացուցիչները, մյուս պետությունները՝ զանգվածներ: Ինքնին՝ մեծ ութնյակ բառակապակցության կիրառումը հենց ռասիստական թեզիս է. վերև-ներքև, երկու լեզու: Միջազգային հարաբերությունների խոսույթում ամենասկզբունքային պահը ակումբի առկայությունն է. մեծ ութնյակի,

էլիտար պետությունների և զանգվածների՝ այսինքն մյուս պետությունների առկայությունն է: Օրինակ՝ առաջին աշխարհ և երրորդ աշխարհ: Ի՞նչ է սա. խոսույթ է:

Պոստպոզիտիվիզմի մեջ ստրուկտուրալիզմի ուղղությունը ևս քննարկում է խոսույթի հարցը: Սրանք ասում են՝ մենք կարող ենք ինչ-որ երկրների բարձրացնել էլիտայի շարքերը, իսկ ինչ-որ երկրների իջեցնել զանգվածների շարքերը: Ընդ որում՝ կոնստրուկտիվիզմը ասում է, որ չկա էլիտարության և զանգվածի վերաբերյալ ունիվերսալ չափանիշ: Այդ չափանիշները շատ տարբեր են, և դա ձևավորվում է խոսակցության, խոսքի ընթացքում: Յուրաքանչյուր մեկ բաղադրիչ կարող է նշանակություն ունենալ: Գործառույթները ձևավորվում են այսպես. մեկին թույլ են տալիս էլիտայի շարքերը, որովհետև շատ բնակչություն ունի, այ քեզ բան, բայց ցուցիչ է ամեն դեքպում, մյուսը շատ ադամանդ ունի, մյուսը շատ գազ ունի, մյուսը շատ համառություն ունի: Ընդ որում՝ այստեղ կա հետաքրքիր պահ. համառությունը, պահանջատիրությունը էլիտար դիսկուրս է: Պարետոյի օրենքն է. պահանջում է, պնդում է, ձգտում է միայն էլիտան: Զանգվածները ոչինչ չեն պահանջում: Եվ այստեղ, օրինակ, ՀՀ-ում Քուռ-Արաքսյան Հանրապետության դիսկուրսը էլիտար դիսկուրս է՝ ըստ պոստպոզիտիվիզմի կամ ստրուկտուրալիզի տեսության: Խաղաղության խոսույթը, որը մեզ մոտ 1991թ. անկախացումից հետո վերածվեց դոմինանտ արտաքին դիսկուրսի, բայց նաև հոգեկան հիվանդության, զանգվածի դիսկուրս է: Ինչպես Պարետոն էր նշում. զանգվածը ոչինչ չի ուզում, զանգվածին ոչինչ պետք չէ: Միայն էլիտան է պահանջատեր, անընդհատ ինչ-որ բան է ուզում: Այսինքն՝ մեր արտաքին քաղաքականությունը միջազգային հարաբերությունների մեջ պոստպոզիտիվիզմի տեսության շրջանակներում զանգվածի քաղաքականություն է, որը Հայաստանին շպրտում է զանգվածի պետությունների շարքերը:

Եվ վերջապես վերջին հարացույցը՝ դա **բազմաբևեռ աշխարհի տեսությունն** է, որտեղ էլիտայի և զանգվածի հարցը դիտարկվում է քաղաքակրթական առանձնահատկություններով: Այսինքն՝ յուրաքանչյուր քաղաքակրթություն ունի սեփական էլիտան և զանգվածները: Օրինակ՝ քրիստոնեական քաղաքակրթությունը, իսլամական քաղաքակրթությունը ունեն իրենց էլիտաները և զանգվածները, որը կապված է մշակութային պոտենցիալի հետ:

Ասյտեղ էլիտան տրանսազգային է, բայց գլոբալ չէ: Տրանսազգային է, որովհետև պետության սահմաններից կարող է դուրս գալ, կարող է ոչ, իսկ գլոբալ չէ, քանի որ սահմանափակվում է քաղաքակրթության սահմաններում: Ակնհայտ է, որ քրիստոնեական քաղաքակրթության մեջ հայ ազգը էլիտա է, եթե նկատի ունենանք, որ քրիստոնեության երեք ճյուղերից մեկի՝ առաքելական ճյուղի ղեկավարը մենք ենք: Մի բան, որը երբևէ չի օգտագործվել, փոխարենը միշտ թմբկահարվել է զանգվածի պետության քաղաքականությունը՝ օգտագործելով զանգվածի խոսույթը՝ խաղաղության անհեթեթ քաղաքականությունը, որը մեր պետությունը շպրտել է զանգվածի պետությունների շարք:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվել են միջազգային հարաբերությունների տեսությունները էլիտաների տեսության համատեքստում: Ակնհայտ է, որ պետության արտաքին քաղաքականությունը պետք է հիմնված լինի գիտական և տեսական ընկալման վրա:

Բանալի բառեր. էլիտա, միջազգային հարաբերություններ, ռեալիստներ, լիբերալներ, նեոլիբերալներ, քաղաքակրթական տեսություն:

МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ В СВЕТЕ ТЕОРИИ ЭЛИТЫ

Гайк Сукиасян

Кандидат политических наук, доцент, старший научный сотрудник Института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

В статье рассматриваются теории международных отношений в контексте теории элит. Очевидно, что внешняя политика государства должна основываться на научно-теоретическом осмыслении.

Ключевые слова: элита, международные отношения, реалисты, либералы, неолибералы, теория цивилизации.

INTERNATIONAL RELATIONS
INSIDE THE LIGHT OF ELITE THEORY

Hayk Suqiasyan
Candidate of Political Sciences, Associate Professor,
Senior Researcher,
Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

SUMMARY

The article examines the theory of international relations in the context of the theory of elites. It is obvious that the foreign policy of the state should be based on scientific and theoretical understanding.

Keywords: elite, international relations, realists, liberals, neoliberals, the theory of civilization.